ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ), ՄԻՋԻՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԻՆՉԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ն ԸՆԴԳՐԿՎԱԾ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. ՀՀ ֆինանսների նախարարություն	11.12.2023 N 01/34-3/23908-2023
«Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների առկա ուսուցման վճարովի համակարգում ընդգրկված և մինչև 2023-2024 ուսումնական տարին Լեռնային Ղարաբաղի կողմից ուսման վարձի փոխհատուցում ստացած ուսանողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի 2-րդ կետով հանձնարարվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարին՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել առաջարկություն ՀՀ 2023թ. պետական բյուջեում վերաբաշխում կատարելու վերաբերյալ, միաժամանակ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելով ՀՀ 2024թ. պետական բյուջեում: Այդ կապակցությամբ հայտնում ենք հետևյալը. Նախագիծ 2-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 4-րդ կետով սահմանվում են 2023-2024 ուսումնական տարվա համար տրվող փոխհատուցման չափերը և պայմանները, ընդ որում, 4-րդ կետի՝	**Ընդունվել է:** Նախագծում հստակեցվել են ուսման վարձի փոխհատուցում ստացող սովորողների կատեգորիաները և, դրանով պայմանավորված, խմբագրվել է նախագիծը:

1-ին ենթակետի համաձայն՝ 1-ին կիսամյակի ուսման վարձը նախատեսվում է փոխհատուցել 100%-ի չափով, 2-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ կիսամյակի ուսման վարձի փոխհատուցումը կապվում է 1-ին կիսամյակի արդյունքում ՄՈԳ-ի 65%-ը հաղթահարելու հետ: Իսկ Կարգի 5-րդ կետում նշվում են շահառուների խմբերը, որոնց վրա չի տարածվում ՄՈԳ-ի 65%-ը հաղթահարելու վերաբերյալ դրույթը (առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք, 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ երեխա ճանաչված անձինք (ֆունկցիոնալության ծանր և խորը, իսկ երեխաների դեպքում նաև միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձինք), ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներ, զոհված (մահացած) զինծառայողների ծնողներ, ամուսին (կին), մինչև 27 տարեկան զավակներ): Փաստորեն, Կարգով ուսման վարձի փոխհատուցում ստացող 135 սովորողների թվաքանակում ներառված են նաև վերոնշված շահառուները, որը պարզաբանման կարիք ունի, քանի որ վերջինների ուսման վարձի փոխհատուցման գծով կարգավորումներ են նախատեսված ՀՀ օրենսդրությամբ,	

այսպես, ՀՀ կառավարության 27.07.2006թ. N1183-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ պետությունը նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում է տրամադրում օրենքով նախատեսված սոցիալական խմբերին: Վերոգրյալը նկատի ունենալով՝ առաջարկում ենք Կարգում հստակեցնել ուսման վարձի փոխհատուցում ստացող սովորողների կատեգորիաները և, դրանով պայմանավորված, խմբագրել ներկայացված նախագծերը:	
2. ՀՀ արդարադատության նախարարություն	**04.12.2023թ.** **N /27.1/51248-2023**
«Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների առկա ուսուցման վճարովի համակարգում ընդգրկված և մինչև 2023-2024 ուսումնական տարին Լեռնային Ղարաբաղի կողմից ուսման վարձի փոխհատուցում ստացած ուսանողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:	**Ընդունվել է ի գիտություն:**
3. ՀՀ վարչապետի աշխատակազմ	**14.12.2023թ.** **N 02/11/43389-2023**
Սոցիալական հարցերի վարչություն 1. Նախագծի՝	

1) վերնագրում և 1-ին կետում կիրառվում է «ուսանողների» բառը, մինչդեռ հավելվածի վերնագրում և տեքստում կիրառվում է «սովորողների» բառը, ինչն առաջացնում է անհամապատասխանություն,	**Ընդունվել է:** Նախագիծը խմբագրվել է և «ուսանողներ» բառը փոխարինվել է «սովորողներ» բառով:
2) վերնագրում, 1-ին կետում, հավելվածի վերնագրում և տեքստում կիրառվում է «կարգ» բառը, մինչդեռ 2-րդ կետում՝ «միջոցառում» բառը, ինչն առաջացնում է անհամապատասխանություն,	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:
3) 2-րդ կետում հասկանալի չէ «բյուջեներ» բառը՝ նկատի ունենալով 3-րդ կետով սահմանվող 2023-2024 ուսումնական տարվա ժամկետային սահմանափակումը,	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:
4) 3-րդ կետում անհասկանալի է, թե ինչու է տվյալ կարգի շահառու լինելու համար սահմանվում 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված ընտանիքների անդամ լինելու հանգամանքն այն դեպքում, երբ Լեռնային Ղարաբաղի ամբողջ ժողովուրդն է տեղահանվել (այսինքն տեսականորեն չի կարող լինել չտեղահանված ընտանիքի անդամ ուսանող): Բացի այդ, նախագծով հաստատվող կարգում առկա չէ բուհերի կողմից շահառուների ցուցակը կազմելիս ընտանիքների բռնի տեղահանված լինելը ճշտելու որևէ մեխանիզմ.	**Ընդունվել է մասամբ:** Համապատասխան նախագծով կարգավորվում են 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված ընտանիքների այն սովորողների վրա (այդ թվում՝ մինչև 2023-2024 ուսումնական տարին Լեռնային Ղարաբաղի կողմից ուսման վարձի փոխհատուցում ստացած), որոնք 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ սահմանված կարգով ընդունվել կամ հրամանագրվել են ՀՀ նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական

	կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում: Միաժամանակ նախագծով հաստատվող կարգում լրացվել է նոր կետ, համաձայն որի համապատասխան պայմանների առկայությունը ստուգվելու է Միասնական սոցիալական ծառայության գրանցամատյանների հետ:
5) հավելվածում՝ ա. 3-րդ կետի համաձայն՝ կարգի շահառու են հանդիսանում Հայաստանի Հանրապետության բուհերում՝ 2020-2021, 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիներին ընդունվածները, մինչդեռ նման պայմանի դեպքում դեպքում շահառուների ցանկից դուրս կմնան առնվազն մագիստրոսի և կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով սովորողները,	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
բ. 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսվում է, որ սովորողներին 2023-2024 ուսումնական տարվա համար տրվում է փոխհատուցում 2-րդ կիսամյակի համար տվյալ կիսամյակի ուսման վարձի 100 տոկոս չափով՝ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքում ՄՈԳ-ի 65.00 տոկոսը հաղթահարելու դեպքում, ինչը խնդրահարույց է, քանի որ 2-րդ կիսամյակի ՄՈԳ-ը գոյանում է 1-ին կիսամյակի արդյունքում, որն արդեն ավարտվում է, հետևաբար շահառուն իր ցուցանիշը սահմանվող պայմանին համապատասխանեցնելու ողջամիտ ժամանակ չի ունենա,	**Չի ընդունվել:** ՄՈԳ-ի 60-65.00 տոկոսը համարվում է նվազագույն առաջադիմություն և քննաշրջանով նախատեսված քննությունները և սուգարքները հանձնելու պարագայում ուսանողը պարտավոր է այն ապահովել: Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ կրթության ոլորտում որդեգրած քաղաքականությունը միտված է առաջադիմության հիման վրա ուսանողներին կրթաթոշակով խրախուսելուն:

գ. կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ փոխհատուցումը չի տրվում, եթե սովորողն ուսման վարձի փոխհատուցում է ստանում այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից: Կարգի 7-րդ կետի համաձայն՝ եթե սովորողն օգտվում է բուհի կողմից սահմանված ուսման վարձի փոխհատուցման իրավունքից կամ ուսման վարձի փոխհատուցում է ստանում այլ ֆինանսավորողի կողմից, ապա փոխհատուցվում է ուսման վարձի մնացորդային գումարի չափով: Վերոնշյալ երկու կետերի միջև առկա է հակասություն, որը հաղթահարելու համար անհրաժեշտ է 5-րդ կետի 2-րդ ենթակետում «փոխհատուցում» բառից առաջ լրացնել «ամբողջական» բառը, իսկ 7-րդ կետում՝ «փոխհատուցման» և «փոխհատուցում» բառերից առաջ լրացնել «մասնակի» բառը,	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան լրացումներ:
դ. 9-րդ կետի համաձայն՝ բուհը կազմում և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն է տրամադրում շահառուների անվանացանկ, ինչը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի՝ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փոխարեն ԿԳՄՍ նախարարության ներգրավվածության տեսանկյունից: Նույնանման խնդիր առկա է նաև 6-րդ կետում:	**Չի ընդունվել:** Հաշվի առնելով, որ համապատասխան նախագիծը ընդգրկում է նաև նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ոլորտը:
ե. 9-րդ կետում պահանջվող տեղեկատվության մեջ առկա չէ շահառուների ընտանիքների բռնի տեղահանված լինելը հավաստող տեղեկանքը: Կարգում բացակայում են նաև ուսանողի ԷՂ-ից փոխհատուցում ստացած լինելը	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան լրացումները:

հավաստող մեխանիզմները: զ. 11-րդ կետը հակասում է 3-րդ կետին, ըստ որի «սույն կարգով սովորողին ուսման վարձի փոխհատուցումը տրամադրվում է միայն 2023-2024 ուստարվա համար»:	**Ընդունվել է:** Կետը խմբագրվել է, համաձայն որի ուսումնառությունը 2023-2024 ուսումնական տարում ընդհատած (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում) սովորողը սահմանված կարգով և ժամկետներում վերականգնվելիս պահպանում է սույն կարգով փոխհատուցում ստանալու իրավունքը: